ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N ՀՀԿԳՆԳՀԾՁԲ-18/15-Հ1
27.10.2018թ ԿՆՔՎԱԾ ԹԻՎ ՀՀԿԳՆԳՀԾՁԲ-18/15 ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան << 14 >> << 12 >> 2018թ

ՀՀ կրթության և գիտության նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար՝ Ն. Հարությունյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, /այսուհետ՝ Պատվիրատու/, մի կողմից, <<Արխի Էվրիկա>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ռ. Արզումանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Կատարող) մյուս կողմից, հիմք ընդունելով 2018թ հոկտեմբերի 27-ին կնքված N ՀՀԿԳՆԳՀԾՁԲ-18/15 գլխավոր գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 կետը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կատարողը պարտավորվում է Պայմանագրով նախատեսված Ծառայությունը մատուցել համաձայն սույն համաձայնագրի N1 հավելվածով նախատեսված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի:

1.2 Համաձայնագրի /Պայմանագրի/ պայմանները կիրառվում են պայմանագիրը կնքելուց հետո մինչև սույն համաձայնագիրը կնքելը Կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում Պայմանագիրը կնքելուց հետո մինչև սույն համաձայնագիրը կնքելը Կատարողի կողմից մատուցված ծառայության դիմաց վճարումն իրականացվում է սույն համաձայնագիրը, ինչպես նաև Պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում, համաձայն սույն համաձայանգրի N2 հավելվածով նախատեսված վճարման ժամանակացույցի:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև պարտավորությունների լրիվ կատարումը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնաց Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, Ծառայության հանձնման-ընդունման հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Սույն համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի N1 և N2 հավելվածները համարվում են համաձայնագրի անբաժանելի մասը:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կրթության և գիտության նախարարություն	<<Արխի Էվրիկա>> ՍՊԸ
Ք. Երևան, Կառավարական տուն 2	Ք. Երևան, Մաշտոցի 49/14
ՀՀ ՖՆ աշխատակազմի	Ամերիաբանկ ՓԲԸ
գործառնական վարչություն	Հ/Հ 1570003679100100
Հ/Հ 900013000543	ՀՎՀՀ 01527942
ՀՎՀՀ 02512868	Տնօրեն՝
Գլխավոր քարտուղար՝	
_____ Ն. Հարությունյան	_____ Ռ. Արզումանյան
/ստորագրություն/ Կ.Տ	/ստորագրություն/ Կ.Տ

Հավելված N 1
«14» «12» 2018թ. կնքված
ՀՀԿԳՆԳՀԾՁԲ-18/15-Հ1 ծածկագրով համաձայնագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ – ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության								
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	Մատուցման ժամկետ
1	71241200/501	**Սյունիքի մարզի թվով 11 հանրակրթական ուսումնական հաստատություններում և Գորիսի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնում տարածքների վերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության ծառայություններ, ընդ որում**		դրամ	2600000	2600000	1	դեկտեմբերի 15
		Կատարման ենթակա աշխատանքների նպատակը	Սյունիքի մարզի թվով 11 հանրակրթական ուսումնական հաստատություններում և Գորիսի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնում մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ աշխատանքային և կոմունալ պայմանների ստեղծում.					
		Կատարման ենթակա աշխատանքների բնութագիրը	Վերանորոգման համար՝ ուսումնասիրելով Սյունիքի մարզի թվով 11 հանրակրթական ուսումնական հաստատություններում և Գորիսի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնում շենքային պայմանները նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում և փորձաքննություն.					

		Հիմքերը	Համաձայն՝ - Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի փետրվարի 18-ի N 6 որոշմամբ հաստատված «Համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրման գործողությունների պլանի և ժամանակացույցի» - «Խոցելի երեխաների սոցիալական ներառում. Երեխայի խնամքի համակարգի բարեփոխման շրջանակներում այլընտրանքային խնամքի, ընտանիքի աջակցության և ներառական կրթության ծառայությունների ընդլայնում» երկամյա ծրագիրի՝ ԱՄՆ ՄԶԳ աջակցությամբ և ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի հետ գործընկերությամբ: - Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության և ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի միջև կնքված փոխըմբռման հուշագրի					
		Վերանորոգման վայրը և բնակլիմայական պայմանները	ՀՀ Սյունիքի մարզ: Ըստ ՀՀՇՆ II-7.01-2011 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվ ակտով սահմանված կլիմայական շրջանցման քարտեզի՝ «ցուրտ» կլիմայական պայմաններ:					
		Նախագծի տեսակը	Աշխատանքային նախագծի կազմում, չափագրում, ՀՀ Սյունիքի մարզպետարանի կրթության, սպորտի և մշակույթի վարչության հետ համաձայնեցում:					
		Նախագծի կազմը	Աշխատանքային նախագծի կազմում, լոկալ, օբյեկտային ու ամփոփ նախահաշիվներ, ծավալաթերթ /կրիչով և 7 օրինակ փաստաթղթային տարբերակով/:					

		Աշխատանքների անվանումը	Մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնում և հանրակրթական ուսումնական հաստատություններիում՝ Թեքահարթակների կառուցում - Բռնաձողերի տեղադրում - Սամ. հանգույցների նորոգում և հարմարեցում - Աշխատասենյակների նորոգում - Դասասենյակների նորոգում - Լոգոպետի սենյակի կառուցում/նորոգում - Հոգեբանի սենյակի կառուցում/նորոգում - Հատուկ մանկավարժների սենյակի կառուցում/նորոգում - Սուրդոմանկավարժի, տիֆլոմանկավարժի սենյակի կառուցում/նորոգում - Սոց. մանկավարժի սենյակի կառուցում/նորոգում					
		Ճարտարապետահատակագծային և կոնստրուկտիվ լուծումներ	Դռները մետալոպլաստե, պատուհանները ապակե փաթեթով 4+4 (մմ) մետալոպլաստե, պատուհանագոգերը պլաստմասե: Հատակները՝ դասարաններում եվրոպական արտադրության լամինատ, սանհանգույցներում՝ կերամիկական սալիկներ, ներքին հարդարումը՝ բարելավված, էլեկտրահաղորդալարերը՝ պղնձե, ներքին ջրամատակարարում և ջրահեռացում:					
		Այլ պահանջներ	- Նախագծի համաձայնեցում շահագործողի հետ: - Շինանյութերի և կոնստրուկցիաների գնահատումներն իրականացնել հրապարակվող տեղեկագրին համապատասխան: - Օգտագործվող					

			շինարարական նյութերի, պատրաստվածքների հատկանիշները նկարագրել նախագծում, ծավալաթերթում առավել մանրամասն և սպառիչ: - Նախագծանախահաշվային փաստաթղթերը մշակել գործող նորմերի և կանոնների պահանջներին համաձայն: - Ներկայացնել կապալի օբյեկտի և օգտագործվող նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները: - Ներկայացնել նորոգման աշխատանքների կատարման համար պահանջվող լիցենզիաներին, տեխնիկական միջոցներին, աշխատանքային ռեսուրսներին և հատկանիշներին ներկայացվող պահանջները: - Նախագծանախահաշվային փաստաթղթերը հանձնել դրական փորձաքննության եզրակացությունով: -Շրջակա միջավայրի վնասի նվազզեցման ծրագիր					

* *ծառայության կատարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ն. Հարությունյան

/ստորագրություն/ Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

Ռ. Արզումանյան

/ստորագրություն/ Կ.Տ

Հավելված N 2
«14» «12» » 2018թ. կնքված
ՀՀԿԳՆԳՀԾԶԲ-18/15-Հ1 ծածկագրով համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության												
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	**գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)**	**անվանումը**	**դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թ-ին՝ ''Ներառական կրթության համակարգի հզորացում Հայաստանում'' դրամաշնորհային ծրագրի շրջանակում՝ այդ թվում****									
			ապրիլ	**մայիս**	**հունիս**	**հուլիս**	**օգոստոս**	**սեպտեմբեր**	**հոկտեմբեր**	**նոյեմբեր**	**Դեկտեմբեր /մինչև 20-ը/**	**Ընդամենը**
1	*71241200/ 501*	Սյունիքի մարզի թվով 11 հանրակրթական ուսումնական հաստատություններում և Գորիսի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնում տարածքների վերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության ծառայություններ									*2600000*	*2600000*

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

-- Ն. Հարությունյան
/ստորագրություն/ Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

-- Ռ. Արզումանյան
/ստորագրություն/ Կ.Տ